անոր քարոզութիւնները։ Քանանացի կնոջ աղջիկը բժշկելէ յետոյ Փրկիչը անցաւ Սիդոնէն (Մատ. Ի. 24–31) և յետոյ յայտարարեց այս պատգամը. «Վա՛յ քեզ Քորազին, վա՛յ քեզ Բեթսայիտա, զի եթէ ի Տիւրոս և ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ ի ձեզ եղեն, վաղու ևս արդեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր։ Բայց ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ» (Մատթ. ԺԱ. 21–22)։ Ս. Պօղոս երբ Հռոմ ճամբորդեց, ցամաք ելաւ ի Սիդոն և տեսաւ իր բարեկամները և Քրիստոսի աշակերտները (Գործք. ԻԷ. 3)։

Եւսեբիոսի համաձայն, Զենոբիոս՝ քահանայ եւ բժիշկ՝ Սիդոնացի էր որ նահատակուեցաւ Անտիոքի մէջ Դիոկղետիանոսի օրով, և այս քաղաքին Թէոդորոս եպիսկոպոսը 325ին ներկայ գտնուեցաւ Նիկիոյ ժողովին։ 551ի երկրաշարժին Պէրութի նշանաւոր իրաւագիտական վարժարանը փոխադրուեցաւ Սիդոն ուր շարունակեց մնալ մինչև իսլամաց արշաւանքը։

Տիւրոսի եւ Սիդոնի մասին աւանդութիւններ. — Ս. Լեւտարանիչները Յիսուսի կատարած Փիւնիկեցի կնոջ մը դիւահար աղջկան բժշկութիւնը կը դնեն Տիւրոսի և Սիդոնի սահմաններուն մէջ. այս բացատրութեամբ, կատարուած հրաշքին բուն տեղը անորոշ կը մնայ. աւանդութիւնն է որ կը ճշդէ այս հրաշքին պատահած տեղը։ Մելանիա (կրտսերը) ուխտաւորուհին Սիդոնի մէջ տեսած է Փիւնիկեցի կնոջ տունը որ եկեղեցիի վերածուած է ի պատիւ Ս. Փոկասի։

Խաչակիրներու ժամանակ, աւանդութիւնը ցոյց կուտար Սիդոնի մէջ եկեղեցիի մը կողակին մէջ տեղաւորուած մէկ քարը՝ որուն վրայ, կ'ըսուի թէ Յի-